ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

REPUBLIQUE
D'ARMENIE OCCIDENTALE



BATI ERMENISTAN
CUMHURIYETI

РЕСПУБЛИКА
ЗАПАДНАЯ АРМЕНИЯ

«Պատրիդա»-ն հորդորում է ԼՂՀ եւ Արեւմտյան Հայաստանի իշխանություններին ճանաչել Թուրքիայի կողմից հույների ցեղասպանությունը

23-01-2015 19:02:36 | | Քաղաքական

Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԼՂՀ) բնակվող հունական համայնքների ստեղծած «Պատրիդա» ՀԿ-ն պատրաստվում է դիմել ԼՂՀ եւ Արեւմտյան Հայաստանի իշխանություններին Օսմանյան Թուրքիայում հույների հանդեպ իրականացված ցեղասպանության ճանաչման գործընթացը սկսելու խնդրանքով: Այս մասին հունվարի 23-ին տեղեկացրեց «Պատրիդա» հունական ՀԿ-ի նախագահ Էդուարդ Պոլատովը:
Ըստ նրա՝ հույն ժողովրդի համար շատ կարեւոր է, որպեսզի հայկական երկու պետություններից առաջինը ԼՂՀ-ն ընդունի եւ դատապարտի Օսմանյան Թուրքիայում կատարված հույների ցեղասպանությունը, քանի որ ԼՂՆ-ն ունի համանման պատմություն եւ այժմ կայացած պետություն է:
«1992 թվականից անմիջապես հետո, երբ Հայաստանը դարձավ անկախ եւ ժողովրդավար պետություն, մենք առաջին անգամ Հայաստանի տարածքում բարձրացրեցինք հույների ցեղասպանության ճանաչման հարցը եւ հույս ունենք, որ շատ շուտով հայկական պետությունները կճանաչեն հույների ցեղասպանությունը»,- նշեց Է. Պոլատովը:
Նրա տեղեկացմամբ՝ Թուրքիան հաճախակի է դիմում սադրիչ գործողությունների ինչպես Հայաստանի, այնպես էլ Հունաստանի եւ Կիպրոսի սահմանին:
Բանախոսի պնդմամբ՝ Թուրքիան ներկայումս ակտիվորեն վերաբնակեցնում է Կիպրոսի հյուսիսային հատվածը:
Լրագրողի այն հարցին, թե հույների ցեղասպանության ճանաչումից հետո հաջորդ քայլը որն է լինելու, Է. Պոլատովը ընդգծեց, որ պահանջելու են վերադարձնել իրենց տարածքները, պատմական, մշակութային եւ այլ արժեքները:

Էլիզա Զախարյան, «Նոյյան Տապան»

Նոյյան տապան - Քաղաքական
Լուրեր Հայաստանից եւ Սփյուռքից

- See more at: http://nt.am/am/news/201541/#sthash.iKvbYRXz.dpuf